

# ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ (Մահուան 850ամեակի առթիւ)

ԱՐՓԻ ՎԱՐԴՈՒՄԵԱԾ  
avarдумյան8@gmail.com  
«Արեգական լուսոյ ծագման  
Սէր քո առ իս համանըման»  
(Ս. Ներսէս Շնորհալի)

## ՄՈՒՏՔ

Կիլիկեան Հայաստանը, որ այլ կերպ կոչում է Փոքր Հայաստան կամ Սիսուան<sup>1</sup> (քանի որ մայրաքաղաքը Սիսն էր) հայկական միջնադարեան պետութիւն էր, որ գոյութիւն ունէր ԺԱ.-ԺԴ. դարերում Փոքր Ասիայի հարաւարեւելքում՝ Միջերկրական ծովափի հիսիս-արեւելեան անկիւնում։ Այն հնուց իվեր բնակեցուած է Եղել նաեւ հայերով, եւ ԺԲ.-ԺԴ. դարերում այնտեղ հաստատուած հայոց թագատրութեան օրօք Կիլիկիան հասաւ տնտեսական ու մշակութային այնպիսի բարձունքների, ինչպիսին մինչ այդ երբեք չէր ունեցել։ Հայկական պետականութեան պայմաններում Կիլիկիայում լուատրութեան, գիտութեան ու արուեստի տարրեր բնագաւառներն այնպիսի հզօր վերելք ունեցան, որ այդ ազդակների հանրագումարը կարելի է միտուած համարել դեպի համամարդկային մեծ Վերածննդի բարձունքներ։ Այդ առաջընթաց շարժումն սկսուել էր դեռեւ ԺԱ. դարում, երբ ժողովրդական ու գուանական երգարուեստը զարգանալով՝ իր բնական ազդեցութիւնն էր թողնում նաեւ հոգեւոր մասնագիտացուած ստեղծագործութիւնների վրայ՝ հետզիւտէ աշխարհականացնելով հայ գրաւոր բանաստեղծութիւնն ու նպաստելով առաւել աշխարհիկ բնոյթի տաղերգութեան զարգացմանը։

## ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Հայկական Կիլիկիան իր մշակութային ծաղկմանը հասաւ միջնադարի մեծատաղանդ երգահան Ս. Ներսէս Դ. Շնորհալի կաթողիկոսի օրօք (1098-1173)։ Նա կրուել է նաեւ Ներսէս Դ. Կլայեցի՝ 1147ից մինչեւ կեանքի վերջը Հռոմեայ ամրոց-քաղաքում ապրելու եւ ստեղծագործելու համար, իսկ Շնորհալի, Երգեցող կամ Երգող պատուանուններին արժանացել է բանաստեղծական ու երաժշտական արուեստների ասպարեզում ցուցաբերած բազմազան ակնառու ծիրքերի եւ հսկայական նորադարութիւնների շնորհիւ։

<sup>1</sup> Հ. Ղ. Ալիշան, Սիսուան համագրութիւն հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն մեծագործ, Վենետիկ - Ս. Ղազար, 1885:

Ներսէս Շնորհալին ծնուել է Ապիրատ Պահլատունի մեծազօր իշխանի ընտանիքում՝ Կիլիկիայի Տիովք գալատով Ծովք ռդեակում (ըստ ոմանց՝ Ծոփաց աշխարհի Անծիս գալատում, ուր եւ գտնուել է հայկական Ծովք դղեակը)<sup>2</sup>: Նրա ծննդեան թուականը ստոյգ յայտնի չէ. ըստ Երաժշտագէտ Նիկողոս Թահմիզեանի՝ Շնորհալին ծնուել է 1101ին<sup>3</sup>, ըստ Հայ Եկեղեցու հանրագիրարանի՝ 1098ին<sup>4</sup>, գրականագէտ Հենրիկ Բախչինեանը հաւանական է համարում մօտաւրապէս 1100ը<sup>5</sup>: Իսկ Հ. Ղետնդ Ալիշանի Շնորհալի եւ պարագայ իր Երկում նշուած է 1102ը<sup>6</sup>. «Շնորհալին 11 տարուան էր Երբ Եղբայրն Հայոց Եկեղեցւոյն գլուխ բազմեցաւ»<sup>7</sup>, ըստ որում՝ նախորդ էջում Ալիշանը յայտնել էր, որ «Յամին 1113 ամառուան մէջ, Գրիգորիս՝ այսուհետեւ Գրիգոր Գ, նսկաւ յարռո Մեծի Վկայասիրին, ինքն ալ Վկայասէր Փոքր, եւ յարռո նախահաւուն իրեանց՝ Ս. Լուսաւորչին. ասոր թռուան եւ իր անուանակից Գրիգորիսի՝ որդոյ Վրթանիսի նման՝ պարանեկութեան մէջ այնպիսի գերազանց բարձրութեան հասած, դեռ հազի 18 տարեան ըլլալով...»<sup>8</sup>: Այս գովեստները Ներսէս Շնորհալու աւագ Եղբօրն էին վերաբերում, ով նրանից ընդամէնը 6-7 տարով էր մեծ<sup>9</sup>. Նշանակում է՝ Ներսէսը պիտի որ ծնուած լինէր 1101ին կամ 1102ին, ինչպէս գրել է նաև մատենագէտ Արմէնուի Քէօշկէրեանը<sup>10</sup>, իսկ շարականագէտ Գրիգոր Յակոբեանը նշել է հենց 1102ը<sup>11</sup>: Գրիգորն ու Ներսէսը չորս Եղբայրներից այն Երկուան էին, ովքեր մանուկ հասակում իրենց ծննդավայրից տարուել էին Սեաւ Լեռինք կամ Սոլքը Լեառն կոչուող վայրը, որ Կիլիկիոյ եւ Տալրուի լեռների մէջտեղում էր, եւ որտեղ Քեսունի Կարմիր վանքում նրանք հոգեւոր դաստիարակութիւն էին ստացել Ստեփանոս Կարմիր Վանեցի Եպիսկոպոսի մօս՝ իրենց պապ Գրիգոր Բ. (Մեծ) Վկայասէրի հովանու ներքոյ: Վերջինս այնքան հեռաւես անձ էր, որ մահից առաջ Անի քաղաքից կանչելով իր քեռորդի Բարսեղ Ա. Անեցի կաթողիկոսին՝ յայտնում է իր

<sup>2</sup> Ա. Մադոյեան, «Ներսէս Դ Շնորհալի (Ս. Ներսէս Շնորհալի, Ներսէս Կլայեցի, Երգեցոյ)», Հայ Եկեղեցու հանրագիրարան, Պրակ Ա. Ամենայն հայոց կաթողիկոսներ, Ս. Էջմիածին, 2008, էջ 191. նաեւ՝ Գ. Մադոյեան, «Գրիգոր Գ Պահլատոնի (Գրիգորիս, Փոքր Վկայասէր)», Հայ Եկեղեցու հանրագիրարան, էջ 54:

<sup>3</sup> Ս. Թահմիզեան, Ներսէս Շնորհալին երգահան եւ Երաժիշտ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1973, էջ 7:

<sup>4</sup> Մադոյեան:

<sup>5</sup> Հ. Բախչինեան, Շարականի գրապարմական ուղին. Ներսէս Շնորհալի, «Ամարաս» հրատ., Երեւան, 2012, էջ 182:

<sup>6</sup> Հ. Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իր, Վենետիկ – Ս. Ղազար, 1873, էջ 53:

<sup>7</sup> Ալիշան, Շնորհալի, էջ 54:

<sup>8</sup> Սոյն, էջ 53:

<sup>9</sup> Սոյն, էջ 52:

<sup>10</sup> Ա. Քէօշկէրեան, «Ներածութիւն», Ներսէս Շնորհալի. դաշեր եւ գանձեր, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1987, էջ Ը:

<sup>11</sup> Գ. Յակոբեան, Ներսէս Շնորհալի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1964, էջ 28:

վերջին կամքը, ըստ որի իրենից յետոյ հայոց կաթողիկոս պիտի ձեռնադրուէր իր քորչ թռո Գրիգորը, ով այդ ժամանակ դեռեւ պատանի էր: Այդպէս էլ լինում է. Բարսեղ Անեցու պատգամի համաձայն նրա մահից յետոյ՝ 1113ին, հայոց հայրապետ է օծում Երիտասարդ Գրիգոր Գ. Պահլաւունին կամ Գրիգորիս Փոքր Վկայասերը<sup>12</sup>: Ինչ վերաբերում է նրա կրտսեր Եղբայր Ներսէսին, իր բացարիկ ձիրքերի շնորհիւ վերջինս ընդամէնը 17-18 տարեկանում արդէն վարդապետ է ձեռնադրուում եւ ստանում Ներսէս անունը, իսկ իր աւազանի անունը ժամանակի ընթացքում իսպառ մոռացութեան է մատուում. «Ս. Ներսէս յաւազանէ ուրիշ անուն մունէր առած, բայց ոչ ոք յիշեր է զայն. այնքան Ծնորհայի կոչումն ամէն անուան գեղ բաւկան սեպուած է. իսկ Ներսէս անունն քահանայ ձեռնադրութեան արեն դրած է իրեն իր կաթողիկոս Եղբայր Գրիգորիս, ՚ի յիշաբակ Մեծին Ներսիսի Պարթեփի, որուն հետ ալ զարմանադէպ նմանութիւն ունեցաւ քահանայապերութեան ժամանակին թուականներով»<sup>13</sup>: Այն ժամանակ հայոց հայրապետը Ծովքում էր նստում, հետեւաբար նաեւ Ներսէսն էր գտնուում այնտեղ. 1139ին վերջինս Կիլիկիոյ նշանաւոր քաղաքներից մէկի՝ Մամեստիայի Եպիսկոպոս է օծուել, իսկ 1166ին իր Եղբայր Գրիգորիս Գ. Պահլաւունի կաթողիկոսը ձեռնադրել է նրան ամենայն հայոց հայրապետ, Եղբայրին 1150ականներից կաթողիկոսական աթոռը տեղափոխուել էր Հռոմելիայ:

#### Ս. ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱՎՈՒ ՊԱՏՈՒԱՏԻՏՂՈՍՆԵՐԸ

Ահա թէ ինչպէս է բացատրում Ալիշանը Ներսէսի Ծնորհայի տիտղոսը. «...մեք կրնամք ըստ սրբութեան, իմասպութեան եւ գիրութեան՝ կոչել Լուսատորիչ, Թարգմանիչ եւ Ծնորհայի: Այս Եղբի կոչումն՝ Ներսիսի աւելի յայգանիշ եւ պանծայի եղաւ՝ քան իր Երկու ուրիշ կոչումներն ալ, Կլայցի եւ Երգորն: Փոխանակ առաջնոյն կ'ըստի ես Ծնորհաց Տէր Ներսէս: Բայց ի՞նչ են Ծնորհը՝ որովք լի համարուի մերս Ներսէս. եւ ուսկի՞ց, եւ Ե՞րբ նախ այդպէս անուաներ է»<sup>14</sup>: Խնդրոյ առարկայ բարի բազմաբնոյթ մեկնաբանութիւնից յետոյ Ալիշանը գրում է. «Աղող շնորհայի անձ մը՝ կ'իմացուի հարրուստ հոգեկան ծրիւք, որ միանգամայն եւ պաշշաճապէս յարմարակ-ցեալ են՝ թէ՝ իրենց մէջ եւ թէ՝ արդարին մարմնական ծրիցը: Այսպիսի ուն էր ուրեմն մերս Ներսէս, առաւելեալ քան զբազում ՚ի մարդկանէ, եւ քան զամէնն՝ իր արեն մերձաւոր սահմաններ, եւ նաեւ քան զիամակարգսն՝ իրմէ շաբ արեն առաջ եւ վերջը: Եթէ մեծ եւ ամենամեծ քաղդ է այսպէս

<sup>12</sup> Կարէն Մաթենուսեան, «Բարսեղ Ա. Անեցի», <այ Եկեղեցու հանրագիտարան, էջ 27. նաեւ՝ Մադոյեան, էջ 54:

<sup>13</sup> «Մեծն Ներսէս նսդաւ կաթողիկոս յամի 565, + 573: Ծնորհային նսդաւ յամի 1166, + 1173, Երկուուն ալ միայն իրեն ութ դարի աթոռակալեցին», Ալիշան, Ծնորհայի, էջ 46, ծան. 1:

<sup>14</sup> Նոյն, էջ 3-4:

ըլլալն, ո՞չ փոքր բաղդ սեպելու է եւ զայնպիսին լաւ ճանչնալը. եւ ո՞չ փոքր գովութեան արժանատր նա՝ որ նախ պաշտամեցուց եւ ընծայեց իրեն այդ կոչումը: ... աւանդութիւն է՝ թէ հրեշտակ մը պատուիրած ըլլայ Շնորհալի կոչել զՆերսէս. այլ ինձ հաւանագոյն երեւի թէ մարդ կամ մարդիկ՝ գերազանցեալ կամ յառաջեալ քան գիրեշտակս՝ ասպրուածայնապէս պաշտամեցուցին մեր կաթողիկոսին զայս կոչում: Եւ չէին ալ կրնար չընել այնպէս՝ եթէ դեսողը եւ լսողը էին անոր մաքուր վարուց, քաղցր կենակցութեան, վայելու խօսից եւ շարժուածոց, բազմազան գիրութեանց, ամենապատիկ լաւութեանց եւ գերագոյն առաքինութեանց, եւ եզական յարկութեանց... երբ հանդէս ընելով ասոր եւ անոնց վաստակոց՝ գրուէր սա ազգին ամենէն մեծ կամ մեծաց հաւասար ասպրուածարան, վայելչարան, չափարան, բանասդեղծ եւ երգիչ. երբ դեսնուէր մեր եկեղեցական պաշտամանց վերջին վայելչութիւն եւ հարսդութիւն դուստ. երբ ճանչցուէր ճշմարիկ քահանայ եւ հովի մը ըստ հոգու նախարիպ քահանայապետին Քրիստոսի. երբ հրաշափառապէս փայլէր ՚ի դէմսն, ՚ի շրջունս եւ ՚ի գիրս՝ յիսուսական հանդարդ եւ հանգուցիչ հեղութիւն. երբ երեւէր ՚ի ծնէ մինչեւ ՚ի յեղին հասակը՝ 70 դարի անդադար աշխարող միայն յօգուր եկեղեցւոյ, դպրութեան եւ շինութեան ազգին, եւ ՚ի բարեզարդութիւն իր ներքին մարդոյն. երբ նկարուի որ յեօթն երկար դարուց բարդեալ եւ բրդեալ յունական եւ հայկական ափելութիւնը՝ ասոր բերնով եւ գրչով կը թունան կը քայքայն, եւ երկու ազգի ապառաժ սիրով՝ իբրեւ երկու հրահալ մետաղը՝ կը դրդին կը գրուին յիրար ծովուելու. երբ այս ամէն բաներով ճոխացեալ անձ մը՝ իբրեւ ամէնայն հոգեկան, մրաւոր եւ մարմնատր ծրիւք ներդաշնակեալ գործիք մը՝ հնչէ զմայլեցնելով զՀայ եւ զՅոյն, զԼապին եւ զԱսորի, զմերձաւոր եւ զհեռաւոր. – աննախանձ նկարուին խիղճն ա'լ չի կրնար չկանչել բարձրածայն, թէ այդպիսի նախախնամեալ ասպրուածապարգեւ անձ մը՝ հարկ էր որ ըլլայ Շնորհալի<sup>15</sup>. Սոյն մէջքերուալ լուսաբանում է Ներսէս Շնորհալու բազմարդին գործունէութեան բազմանիստ երեսակները. պարզ է դառնում, որ նա ո՞չ միայն հայոց իմաստուն հայրապետն էր, այլև դիանագէտի փայլուն ունակութիւններով օժտուած՝ բացահկ խաղաղասէր ու առաքինի մի անձնաւորութիւն, ով կարողանում էր հաշտութեան եզրեր գտնել հայերի, յոյների, լատինների եւ ասորիների՝ միջանի դար տեսած տարակարծութիւնների միջեւ, իր առաքինութեամբ եւ մտքի արտակարգ ճկունութեամբ նպաստելով նրանց հետ հայերի ներ-դաշնակ փոխյարաբերութիւններին: Ու թէեւ Շնորհալու նախորդների մէջ էլ կային բացադիկ ծիրճերով օժտուած կաթողիկոսներ, սակայն նրանցից ոչ ոք միաժամանակ չէր տիրապետում բոլոր այն շնորհներին, որոնցով այդքան շայլօրէն օժտուած էր Ներսէսը. նրան յաջողուեց գերազանցել նոյնիսկ իր

<sup>15</sup> Նոյն, էջ 5-6:

աւագ եղբօրք՝ Գրիգորիս Գ. Փոքր Վկայասէրին, ով հայոց հայրապետն էր աւելի քան կես դար (1113-66):

Ներսէս Շնորհալին կաթողիկոսական աթոռին բազմել է ընդամենը մօտաւորապէս 8 տարի՝ 1166ից մինչեւ իր մահը՝ 1173ի Օգոստոսը, ինչը գուցէ եւ բարեբախտութիւն էր նրա համար, քանզի հնարաւորութիւն է ունեցել իր ժամանակն առաւելապէս տրամադրել ստեղծագործական բազմաբեղուն գործունէութեանը: Աստուածատուր բացահիկ եւ շռայլ ձիրքերի շնորհի նրան անուանել են նոյնիսկ «Երկրորդ Լուսաւորիչ հայոց», «Եռամեծ կամ տիեզերալոյս վարդապէտ», «Աղօթք հայ Եկեղեցու եւ հայ հոգու», «Երանաշնորհ սուրբ»<sup>16</sup> եւն.: Ժամանակակիցների հաւաստմամբ նա ո՞չ միայն գերապայծառ վարդապէտ էր, այլև մեծահոչակ բանաստեղծ ու երաժիշտ, որի տաղաչափական արուեստը լաւագոյնն էր համարտում ո՞չ միայն հայերի, այլև յոյների ու լատինների շրջանում: Շնորհալին ուրոյն մշակման է Ենթարկել հայոց լեզուի տաղաչափութիւնը՝ իր «Յիսուս որդի» եւ «Ողբ Եղեսիոյ» պուէմներում հմտորէն կիրառելով 5ից մինչեւ 15-16 վանկանի անյանգ ու յանգաւոր բազմազան չափեր, ինչպէս նաև ժողովրդագուսանական «հայրէն» կոչուող տաղաչափական ձեւը<sup>17</sup>: Իսկ աստուածաբանութեան ծիրում Շնորհալին այնպիսի հսկայական ճանաչում էր ձեւը բերել, որ ըստ Յայսմատուրիքի՝ նրան անուանել են նաև «Երկրորդ Գրիգոր Աստուածաբան»<sup>18</sup>:

### ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Շնորհալու գրիչը չափազանց բեղմնաւոր է եղել. նա թողել է մատենագրական եւ տաղաչափական բացահիկ հարուստ ու բազմասեռ ժառանգութիւն, որն իր բերած նորոյթներով եւ գրական-երաժշտական բարձրարուեստ հնարանքներով արտացոլում է մեծատաղանդ ստեղծագործողի օժտուածութեան միանգամայն տարրեր ասպարեզները:

Սակայն տուեալ դէպքում մեր ուսումնասիրութեան ծիրում առաւելապէս Շնորհալու երաժշտա-բանաստեղծական անսպառ տաղանդն ու երգչական շնորհքն է: Նշելի է, որ հայոց հայրապետերից աւելի քան մէկ տասնեակն ունեցել է ստեղծագործելու անուրանայի տաղանդ, սակայն Շնորհալին իր օժտուածութեամբ գերազանցել է բոլոր նախորդներին:

<sup>16</sup> Քրիստոնեայ Հայաստան հանրագիրարան, Տիգրան Մեծ իրաւունք, Երեւան, 2002, էջ 788:

<sup>17</sup> Ք. Քուշնարեան, Հայ մոնողիկ երաժշտութեան պատմութեան եւ գրեսութեան հարցեր, (ոռուերէնից հայերէն թարգմանեց Մ. Բրուտեանը, Խմբ.՝ Ա. Բաղդասարեան), «Ամրոց գրուաք», Երեւան, 2008, էջ 122:

<sup>18</sup> Յայսմատուրք, Տպարան Պօղոս Արապեան, Կ. Պոլիս, 1834, էջ 75: Գրիգոր Աստուածաբանը Ս. Գրիգոր Նազիանզացին էր (330-390), ում այդպէս էին կոչել աղանդաւորների դէմ արտասանած հինգ ճառերի համար (Քրիստոնեայ Հայաստան, էջ 237):

Գրիգոր Նարեկացու յետոյ նա հայ միջնադարեան տաղային արուեստի Երկրորդ գագաթը է՝ իր շոայլ ծիրճով ու յօրինելու վարպետութեամբ։ Տարիներ շարունակ Երիտասարդ Ծնորհալին իր կաթողիկոս Եղբօր յանձնարութեամբ համալրել է հայոց Եկեղեցու կարգերում եւ Շարակնոցի կանոններում առկայ թերի մասերը։ Նա հեղինակել եւ ինքն էլ հրաշալիօրէն կատարել հոգեւոր տարրեր բնոյթի Երգեր՝ տաղեր, գանձեր, մեղեդիներ ու մեծաթիւ շարականներ։ Ծնորհալին նաեւ յղկել ու Վերախմբագրել է հայ ծիսական բոլոր ժողովածուները՝ Շարակնոցը, Ճաշոցը, Մաշտոցը, Տօնացոյցը, Ճառընդիրը, Ժամագիրը ու Պատարագամակրոյցը, հարստացնելով դրանք բազմազան ու բարձրարժէք ստեղծագործութիւններով։ Նա համալրել է նաեւ հայոց պատարագի Երգեցողութիւնը մի շարք նշանակալի սրբասացութիւններով, առանց որոնց ներկայումս անհնար կը լինէր պատկերացնել սրբազան պատարագի լիարժէք մատուցումը Հայոց Եկեղեցում։ Դրանց լաւագոյն օրինակներից են՝ «Քարեխօսութեամբ», «Ամէնակալ ես տէր», «Բազմութիւնք հրեշտակաց», «Հրեշտակային կարգաւորութեամբ», «Ով է որպէս», «Սրբութիւն սրբոց» եւ այլք, ըստ որում սրանցից իրաքանչիւրն ունի Երաժշտական բաղադրիչի Երկուական տարբերակ՝ նախատեսուած տօնական եւ լուր (հասարակ) օրերի համար, ինչպէս նաեւ Աւագ Հինգշաբթի օրը կատարուող՝ Ծանր ընթացքով «Որ ի վերայ նստիս» սրբասացութեան ծավալուն մեղեդին, որն օրուայ հանդիսաւոր խորհուրդն արտայայտող տպաւորիչ Երգերից է։ Այսպիսի վեհաջուր նմուշներին հակադրուում են առաւել պարզ ուժմոնվ գնայուն բնոյթի Երգերը, որոնցից են՝ «Ուղոյն տուք միմեանց», «Ահիւ կացցուք» սարկաւագի Երգերը եւ «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» հանրայայտ խմբերգը, որի Երաժշտական բաղադրիչի նախօրինակն ըստ Թահմիզեանի պահպանուել է «Արեւ ելաւ, զէլլունցիներ» խրոխտ քայլերգի Եղանակում<sup>19</sup>։ Նշելի է նաեւ, որ այն ընկած է Արամ Խաչատրեանի ստեղծած՝ խորհրդային Հայաստանի օրիներգի հիմքում։ Ծնորհալունն է նաեւ «Տէր ողորմեայ» աղօթքի առաւել հոգեզմայլ տարբերակը, «Լոցաք ի բարութեանց» փառարանութիւնն ու «Ամէն. Հայր Երկնաւոր» ոխմումը Սուլբ Երրորդութեանը։ Նախ՝ Հօրը, յետոյ՝ Որդուն, ապա եւ՝ Սուլբ հոգուն։ Ծնորհալու օրօք եւ գործուն մասնակցութեամբ ձեւաւրուել են նաեւ հայոց Գանձարան ու Մանրուսմունք ժողովածուները, որոնց պարունակած լաւագոյն նմուշները համարուած են հայկական հոգեւոր Երգեցողութեան զարգացման բարձրարուեստ օրինակները։

Ծնորհալու ստեղծագործական ներկապնակը չափազանց հարուստ է։ Նա յօրինել է ո՞չ միայն պաշտամունքային, այլև արտապաշտամունքային մի շարք Երգեր, հաղորդելով «Երգ» բառին միանգամայն այ՝ ուրոյն ի-

<sup>19</sup> Ն. Թահմիզեան, Երաժշտութիւնը հայկական Կիլիկիայում, ՀՍՍՀ Գիտելիք ընկ., Երեւան, 1989, էջ 5-6։

մաստ: Նրա գրչին են պատկանում Արեագալի Երգերը<sup>20</sup> «Առաւոտ լուսոյ», «Աշխա՛րի ամենայն», «Յարեւելից մինչ ի մուտու», «Անեղանելիդ Աստուած», «Լո՛յս, Արարի՛չ լուսոյ, առաջին լոյս, բնակեալի ի լոյս անմատոյց», որ Երգուում է «Աստուած, Աստուած» սաղմոսից յետոյ եւ ամբողջովին արփիաշուն մի ստեղծագործութիւն է՝ ծօնուած նախաստեղծ պայծառ լոյսի փառաբանութեանը: Արեագալի այս Երգերուում Ծնորհալին մեծարում է հեթանոսական իրական լոյսը՝ յանգելու համար հոգեւոր Վերերկրային լոյսի գոյութեան գաղափարին: Ծնորհալուն իրաւամբ կարելի է համարել հայոց Արծաթէ դարի լուսերգակ լաւագոյն Երգահան: Տեղին կը լինի նշել, որ նա ժամանակին ի մօտոյ հետաքրքրութել է նաեւ հայ արեւորդիների<sup>21</sup> ուամունքով ու ծէսով եւ նոյնիսկ նրանց Սամոսատի ճիւղը դարձի բերելով՝ ընդունել է հայոց առաքելական եկեղեցու գիրկը: Երգերի վերոնշեալ շարքին են յարում նաեւ «Ճանապարի եւ ճշմարտութիւն»ը, առաւոտեան ժամի «Նորաստաղծեալ»ն ու «Արարչական»ը՝ ըստ շաբաթուայ վեց օրերի, խաղաղական ժամի «Նայեաց սիրով»ն ու «Ի Քէն հայցեմք»ը, ինչպէս նաեւ Աւագ Ուրբաթի գիշերուայ «Այսօր անճառ Լուսոյն ծագումն»՝ Երկու տարբերակով, եւ նոյն օրուայ ցերեկին կատարուտդ «Նորոգո՞ղ տիեզերաց» Երգերը, որոնք Ծնորհալու գլուխագործոցներից են:

Յատուկ յիշատակութեան են արժանի Հռոմկայի բերդապահ զինուորների համար իմաստուն հայրապետի յօրինած «Յիշեսցու՛ք ի գիշերի», «Զարթի՛ք, փա՛ռք իմ», «Զարթի՛ր, ընդէ՛ր ննշես, Տէ՛ր», «Զարթուցեալքս ի զրայմանէ», «Անբաժանելի եւ համազոյ Երրորդութեանդ» ժամերգերը, որոնց վերնագրերն արդէն իսկ խօսում են դրանց կիրառական նշանակութեան մասին. տարիներ շարունակ այդ ինքնատիպ Երգերը պարտադիր կերպով կատարել են Կիլիկիայի բերդապահ զինուորները՝ իրենց գիշերային ծառայութիւնը յաւուր պատշաճի իրագործելիս. այժմ դրանք հայոց ժամագրի լաւագոյն նմուշներն են համարում: Ներսէս Ծնորհալու հեղինակած Երգերն այնքան բազմաթիւ ու բազմազան են, որ մի յօդուածի

<sup>20</sup> Արեագալի Երգ.- հայոց հոգեւոր Երգարուեստում լոյսին, առաւոտին ծօնուած տաղեր եւ շարականներ, որոնք սկիզբ են առնում աւելի վաղ՝ հեթանոսական շիշանից՝ կապուած լոյսի եւ արեւի պաշտամունքի, փառաբանութեան հետ: Արեւի օրիներգ.- տէ ս՝ «Ծագող արեւի օրիներգ», «Արշալոյսի, Արեածագի, Արեագալի Երգ» (Ա. Մկրտչեան, Երաժշկական բառարան, ՀՀ ԳԱԱ, Երևան, 2000, էջ 32):

<sup>21</sup> Արեւորդիները իին արեապաշտութեան յետնորդներն էին, որոնք մնացել էին Հայաստանում քրիստոնեութեան մուտքից յետոյ: Նրանց մասին տեղեկութիւններ են հաղորդուած Գրիգոր Մագիստրոսը, Ներսէս Ծնորհալին, Թովմա Մեծովեցին, Մխիթար Ապարանցին (տէ ս՝ մասնաւորապէս՝ Թուղթ ընդհանրական արարեալ Երիցս Երանեալ սուրբ Հայրապետին մերոյ տեսան Ներսիսի Ծնորհալ-ոյ, Էջմիածին, 1865, էջ 309. նաեւ՝ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Աղեքսանդրապոլ, 1910, թուղթ ԿԵ, էջ 161). նաեւ՝ Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, Գիրք Ա, Ծանօթագրութիւններ, էջ 466-67:

սահմաններում անհնար է լիովին ընդգրկել դրանք. աստ բաւական է նշել, որ նրա գրչին պատկանող կանոնական ու պարականոն շարականները շուրջ 200ից ամելի են եւ հանդիսանում են հայոց շարակնոցի գեղեցկագոյն նմուշները: Շարակնոցում առկայ են նաև Շնորհալու գրչին պատկանող մի շարք կարեւոր ժամերգեր, որոնք ներթափանցել են Ժամագործից եւ իրենց բնոյթով յարում են վերը նշուած երաժշտաբանաստեղծական Երգ կոչուող իրորինակ սեռին: Դրանք հայոց Շարակնոցի առաւել զարգացած նմուշներն են, որոնք իրենց բնոյթով երբեմն ընդհուպ մօտենում են տաղերի ու մեղեդիների զարդուրուն ծորերգային ոլորտին: Այդ Երգերն ըստ էութեան տարբերում են կանոնական ատաղձ ունեցող շարականներից իրենց ձեւով ու բովանդակութեամբ՝ դրանով հանդերձ միտուած լինելով դէպի գուանական աշխարհիկ երգարուեստը:

Ներսէս Շնորհալու կարգատրել եւ վերախմբագրել է Շարակնոցի գրեթէ բոլոր տօներին կատարուող կանոնները. նա ստեղծագործաբար է վերաբերուել Մեսրոպ Մաշտոցի եւ Սահակ Պարթեի ստեղծագործութիւններին, յատկապէս առաջին Ապաշխարութեան Երգերին եւ Երկրորդի՝ Զարչարանաց Շաբաթուայ Երգաշարքին: Ամելի եւս ծաղկեցնելով մեր առաջին Երգահան կաթողիկոսի՝ Սահակ Պարթեի յօրինած այն Եղանակները, որոնք վերաբերում են Աւագ Շաբաթի հանդիսաւոր պաշտօներգութեանը, Շնորհալու Երբեմն լրացրել, վերաեղանակատրել եւ ըստ տուեալ օրուայ խորհրդի հրաշալիօրէն ճնիսացրել է դրանք: Իր ստեղծած բազում Երգերուած Շնորհալու այնպիսի կշռոյթներ է կիրառել, որոնք առաւել յատուկ էին աշխարհիկ Երաժշտութեանը՝ չխախտելով հանդերձ հոգեւոր Երգեցողութեանը յարիր վսեմ նկարագիրը: Նա շատ բարձր էր գնահատում իր նախորդի՝ Գրիգոր Նարեկացու հանճարը, որի ստեղծագործութիւններն արդէն լայնօրէն տարածուած էին ժողովրդի տարբեր խաւերի շրջանում. ահա թէ ինչու Երբեմն իր որեւէ ստեղծագործութեան լրասանցքում Շնորհալու ցուցում էր թողնուած՝ կատարել այն Նարեկացու այսինչ կամ այնինչ տաղի Եղանակով<sup>22</sup>:

Ներսէս Շնորհալու հայոց հոգեւոր Երգեցողութեան ամէնից նշանաւոր ներկայացուցիչն է, որն օգտուելով իր հսկայական հեղինակութիւնից, Կիլիկեան Հայաստանի հայրապետի իրաւունքով օրինականացրեց Նարեկացու տաղերի Եղանակներին որպէս չափանմուշների դիմելու բեղմնաւոր փորձը: Իսկ յետագայում շատ յաճախ նաև այլ Երգահաններ լրասանցքում նշում էին իրենց շարականները հե՞նց Շնորհալու այս կամ այն ստեղծագործութեան Եղանակով Երգելու փափաքը, մանաւանդ որ Շնորհալուց յետոյ խազանշանների արուեստը սկսեց աստիճանաբար անկում ապրել՝ հայ ժողովրդի քաղաքական ցաւալի հրադարձութիւնների եւ դրանց պատճառով՝ տնտեսական ծանր պայմանների հետեւանքով:

<sup>22</sup> Թահմիզեան, Ներսէս Շնորհալու Երգահան, էջ 65:

Ներսէս Շնորհալին յաճախ իր ստեղծագործութիւնները գրում էր ծայրակապով՝ տողերի առաջին տառերով կազմելով «Ներսէսի երգ» բառերը կամ պարզապէս «Ներսէս», որոնցից յիշատակելի է յատկապէս «Նորահուաշ պլսակատ՝» հոյակերտ շարականը նուիրուած Վարդան զօրավարի եւ նրա զինակիցների քաջագործութիւններին։ Ընդհանպապէս, անկախ այն հանգամանքից, թէ ում է նուիրուած եղել, կամ ինչ առիթով է յօրինուել Շնորհալու այս կամ այն ստեղծագործութիւնը, դրանք բոլորն էլ տոգորուած են վեհ գաղափարներով՝ ջերմ հայրենասիրութեամբ, ազատասիրութեամբ, մարդասիրութեամբ ու բնապաշտութեամբ։

Ներսէս Շնորհալին ստեղծել է նաեւ հարիւրաւոր չափածոյ հանելուկների գունագեր մի փունջ, որի նմուշների ճնշող մեծամասնութիւնը հաւանաբար սկիզբ էր առնում ժողովրդական բանարոււստի կենսալից ակունքներից եւ ժամանակին գուցէ նաեւ երգում էր։ Ահա թէ ինչպէս է բնութագ-րում Ալիշանն այս հանելուկները։ «Ամենէն ընդունեկան կամ ռամկական քերդուած՝ է Հանելուկը կամ Ռախանք ըստուծն, իբրու Ուրախականք, զուարճութեան ժողովոց եւ կոչնոց ապեն ըստելու եւ լուծուելու համար։ – Այս ամենէն յեղադաս դեսակս ալ պէտք է նշանակել ըստ բազում գլխոց։ նախ իրենց հիաւածքին անբաժանելի շնորհըն. Երկրորդ առաջնութիւն, վասն զի Ներսիսէ առաջ այս ձեւ գրութեան օրինակ չունինք. Երրորդ՝ լեզուն, որ ռամկօրէն կամ աշխարհաբառ լեզուի եթէ հնագոյն գրուածն չէ՝ գոնէ ողանաւորի մէջ հիներէն է. չորրորդ՝ եւ մանաւանդ առաջին՝ հեղինակին նպագակը այսպիսի գրուածոյ մէջ, որ է վերոյիշեալ բարոյական կրթութիւնն՝ հանդերձ գրուանօք եւ սրութեամբ մկաց»<sup>23</sup>։ Փաստօրէն Ալիշանն իրաւամբ նշում է նաեւ բարոյակրթական լուրջ նպատակներին զուարճախօսութեան ու սրամտութեան միջոցով հասնելու Շնորհալու զարմանալի ծիրքը։ Այսինքն, կիլիկեան հայոց հայրապետն այնքան լայնախոհ անձնաւորութիւն էր, որ նրա ունեցած՝ հոգեւորականի բարձրագոյն դիրքը բնաւ չէր սահմանափակում ժամանակի աշխարհիկ բանարոււստի հետ նրա ստեղծագործական սերտ շփումը։

## ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԿԵՐՊԱՐԾ ԱԼԻՇԱՆԻ ԵՐԿՈՒՄ

Դժուար է գուշակել՝ եթէ Ալիշանի Շնորհալի եւ պարագայ իւր աշխատութիւնը գոյութիւն չունենար, յետագայ ուսումնասիրողները ողքան ջանք ու եռանդ պիտի գործադրէին մեծ երգեցողի առինքնող կերպարն ու ստեղծագործական բազմածիր նուաճումներն ի յայտ բերելու համար։ Ա-հա թէ ինչ է գրել Ալիշանը Ներսէս Շնորհալուն համակողմանի կերպով բնութագրող իր հիմնարար երկում։

Շնորհալին ոչ միայն մեր նախակարգեան հեղինակաց կը հաւասարի արժէիք, այլ եւ կը գերազանց զամենեսին առ հասարակ, թէ իրեն եւ թէ անոնց մեզի

<sup>23</sup> Ալիշան, Շնորհալի, էջ 81:

հասուցած գրուածներէն դատելով. Եւ եթէ մէկ կամ միւս տաղանդոյ մասին առաջին չէ, բոլոր մտաւոր եւ գրաւոր յատկութիւնները մէկ տեղ բերելով՝ դժար կ'ըլլայ իրմէ առաջին մը գտնեն: Այսքան գեղեցիկ ձրից եւ յատկութեանց միութիւնն է որ մեր հեղինակը Շնորհալի կ'ընէ. իր գերազոյն յատկութիւնն՝ է անհաւասարելի հաւասարութիւն մը յամենայնի: Շնորհըն, եթէ չեմք սխալիր, այս կերպ գերազանցութիւն մը կը պահանջէ. շնորհըն ինքնին սքանչելի հաւասարաշփութիւն մէ: Կարգէ դուրս հանձար մը՝ թուի թէ շնորհաց չափէն կ'անցնի. սուր եւ բարձր բանաստեղծական թոփչք կամ խորին վսեմութիւնը՝ ղժուարաւ չափի եւ կանոնի մէջ կը մնան. պայծառ եւ անզին ականց կը նմանին, այլ առանձնակ բաններ են, շարք մը, հիսուածք մը, ամբողջ մը չեն ձեւացներ. այնպիսի ամբողջ մը՝ որ հաւասարապէս սքանչելի ըլլայ ամենայն տեսութեամբ, ամենայն յատկութեամբ: Մեր հեղինակին շնորհըն այնչափ եւ այնպիսի է՝ որ իր քով անանկ սաստիկ եւ յանդուգն թոփչք մտաց ալ՝ շնորհքէ պակաս կ'երեւին. ինքն այնպիսի ամբողջութիւն մ'ունի՝ որոյ պակսութիւն չի բերեր աւելի բարձր կամ խոր թոփչք մը չունենալն. թերեւս եւ պակսութիւն բերեր ունենալն: Միով բանի այնպիսի բարձր եւ խոր թոփոցիկ հանձար ունենալն վեր է՝ հանձարոյ թեւերն անգամ կառավարել, եւ այն օդապարիկ հրապարիկ երկնապարիկ երիվարն կամ արծուին անգամ սանձել, եւ շնորհաց շիտակ շատէն վազցընել, ոչ սաստկազայր արեներու պարունակաց մօտ, եւ ոչ երկրաւոր ցրտութեանց, այլ միջին ճամբէ մը՝ որ երկնից մէջ է, այլ երկրիս վրայէն: Ոչ այնքան տարակուտիմ թէ կրնար Ներսէս աւելի բարձր խոյանաւ՝ ի թերդուածն եւ յիմաստո, որքան թէ կրնա՞ր այնպիսի գերազոյն խոյանաց մէջ ալ՝ այսպէս շնորհաբան եւ շնորհալի մնալ: Սակայն ոչ լոկ գրաւորական արուեստ մ'էր Ներսիսի մտաց թեւերը այսպէս նուաճելով՝ շնորհաց հարթ ու վարդ ճամբոն մէջ շարժողն, այլ եւ հոգտոյն սքանչելի եւ աւելի նուրբ եւ սուրբ յատկութիւն մը, որ չէր թողորու իրեն ծայրայել երեւանա՞լ նաեւ ՚ի հանձարս, գերազանցելովն հանդերձ. յատկութիւն մը, որ իր բազմափայլ շնորհաց ալ շնորհըն կրնայ ըստիլ, կամ կենդրոն ճառագայթից նորին<sup>24</sup>:

Այստեղ իրաշալիօրէն երեւակում են ո՞չ միայն Շնորհալու բազում բարձրաճաշակ ձիրքերն ու դրանց գեղարուեստական իրորինակ արտայայտութիւնները, այլ նաեւ հենց իրենց հեղինակի (Ալիշանի) բացարիկ խորաթափանց դիտարկումներն ու նրբամիտ արուեստագէտին յատուկ գեղարուեստական բնութագրումները:

Շնորհալին նաեւ անձամբ երգ-երաժշտութիւն է ուսուցանել երաժշտասէր պատանիներին, յատկապէս նրանց, ովքեր պատրաստում էին հոգեւոր ծառայութեան անցնել Կիլիկիայի վանական կենտրոններում:

Գիտնալոր է որ երաժշտութիւնն կամ երգեցողութիւնն, գէթ ըստ եկեղեցական կարգի, մեծ պարապմունք եւ արուեստ մ'էր, եւ կրնանք ըսել եղած է ամէն ատեն՝ մեր վարդապետանոցաց եւ վանորդից մէջ. թերեւս եւ միակ զարգացած արուեստ չափաբանականաց մէջ՝ յետ թերդողութեան: Նոյնպէս յայտնի է թէ մեր ազգն ի՞նչ մեծ վարկ ու սէր ունի իր հին սրբազն երգեցողաց կամ շարականաց հեղինակաց վրայ, որով շատ հեղ այս գրոց հաւաքման ճակատը կը տպագրէ

<sup>24</sup> Նոյն, էջ 83-84:

մեր երաժշտութեան վրայօք գրուած խօսք մը, կամ գովեստ մը երգահանաց վրայ»<sup>25</sup>

Նոյն աշխատութեան «Ծնորհայի Երգեցող» մասում Ալիշանը գրում է. Յայտ է որ այս գրուածոց մէկ մասն, Տաղերն եւ Շարականք, ոչ միայն չափով են այլ եւ երգելու եղանակա: Ծնորհային ինչպէս ճարտար եւ աննման էր քերդողութեամբ, եւ այնպէս ընտրող ականջ եւ ախորժակ ունէր ներդաշնակութեան, հարկ էր որ երաժշտական ընտիր ճաշակ ալ ունենայ: Ոչ մակամուածական հետեանք մէ ըսածնիս, այլ եւ վկայեալ ստուգութին: Եւ այնքան առաւելութեամբ, որ իրեն գիւսաւոր ծրից մէկն ճանչուեցա, մինչեւ իրեն երկրորդ մականուն եւ յայտարար մ'ալ եղաւ ԵՐԳԵՑՈՂՆ<sup>26</sup> կոչուիլ, ինչպէս կ'անուանենք եւ տունենք մենք զՍ. Ռոմանոս Եմեսացի սարկաւագն յունաց<sup>27</sup>...: Աւելորդ է յիշատակել, թէ որչափ որ մարդկային սրտի քաղցր է երգն, այնքան ալ պանծալի է քաջ երգահանն, եւ այն մանաւանդ որ յատուկ մակագրութեամբ երգեցող կոչուի: Սակայն պէտք չէ հարեւանցի յիշատակաւ մը միայն նկատել զայս 'ի Ծնորհային' ... հարկ իսկ է ճանչնալ այս երկնախառն արուեստ կամ տուրքը՝ երաժշտութինը, իր մէկ մէծ շնորհը կամ շնորհաց յարդարիչ մը. Եւ երբ ինչուան հիմայ նկատածնիս 'ի Ներսէս Եւ Ենոյ այլ աւելի նկատելիքն՝ գումարենք իբրեւ 'ի մի պատկեր եւ 'ի մի տեսնութին, չեմք կրնար ուրիշ կերպով տեսնել զնա' բայց իբրեւ բովանդակ բանական երաժշտութին մը, կենդանի ներդաշնակութին մը. աստուածային եւ բնական շնորհօք խառնեալ ամէն մէկ ձիրքն՝ մէկմէկ ձայնի նման, որոց բոլորն մէկ եղանակ կազմէ. ոչ երգեցող միայն, այլ եւ երգ ուղոյն, յարմարեալ շնորհազարդ շարժմամբք մարմնոյ, շրթանց, մատանց, մտաց եւ հոգւյն: Թէ արդեօք գեղեցիկ գրուածոց եւ եղանակաց նման գեղեցիկ եւ անոյշ ձայն ալ ունէ՞ր. – հաւանական կրնանք ըսել. Եւ եթէ չկարենանք հաստատել բնական գործարանաց կամ կազմուածքին տուրքը, չեմք տարակուաիր կրթութեամբ, արուեստով եւ շնորհօք քաղցութեանը վրայ. գուցէ երգեցող անոնն ալ՝ ոչ միայն երգահանութինը այլ եւ ձայնական կարողութինը նշանակէ<sup>28</sup>:

Աստ ուշագրաւ եւ յիշատակութեան արժանի են Ալիշանի պերճախօս բնորոշումները Ծնորհալու երաժշտական բազմաբնյոյ ձիրքերին, որոնք նա համարում է որքան աստուածային, նոյնքան էլ բնական՝ բովանդակ բանական երաժշտութեան պէս, Ծնորհալուն համարելով ոչ միայն երգող կամ երգեցող, այլ ամբողջապէս երգ՝ մեծատառով ու ամենալայն առումով: Նոյնիսկ ընդգծուած են մարմնի շնորհազարդ շարժումների, շուրթերի, մատների, մտքի եւ հոգու յարմարեալ, այսինքն՝ այս ամէնի ներդաշնակ գուգորդուամը, որ կազմում է ի վերուստ շոայլորէն օժտուած անձի համապարփակ

<sup>25</sup> Նոյն, էջ 86:

<sup>26</sup> «Երգեցիկ. Երգիչ, Երգակ, Երաժիշտ», «Երգեցող. Եւս է մակադրական անուն սեփականեալ երաժշտաց Եկեղեցոյ, որք արարին երգս շարականաց եւ տաղից, որպիսի է 'ի հայս սուրբն Ներսէս Ծնորհայի», Բառզիրք հայկակեան լեզուի, հղո. Ա., տպ. Պօղոսի Արավեան, Կոստանդնուպոլիս, 1844, էջ 342:

<sup>27</sup> Թահմիզեանն էլ է Ծնորհալուն համեմատում Ռոմանոս Երգեցողի հետ (Թահմիզեան, Ներսէս Ծնորհային երգահան եւ երաժիշտ, էջ 17, ծան. 36):

<sup>28</sup> Ալիշան, Ծնորհայի, էջ 85-86:

էութիւնը: Շարունակելով Շնորհալու արուեստի անպարագիծ վաստակի մեծարումը, Ալիշանը յաւելում է.

Շնորհալոյ Երգեցող կոչումն, իրմէ մնացած մեր Եկեղեցւոյ բազմաթիւ Երգերն եւ տաղերն՝ յայսմ մասին ալ զինքն թէ ոչ ժամանակաւ առաջին՝ արդեամբք ընդ առաջինս կը դասեն, մանաւանդ թէ առաջին եւ վերջին. որովհետեւ ինքն լրացուցած է ժամասացութեան Երգերը, իրմէ Վերջը՝ թիզ շարականք աւելցած են: ...Ազգային քերդողութիւնն կամ չափաբանութիւնն եւ ազգային ոճ ճարտարապետութեան, կրնային գուշակել տալ որ հայր ազգային Երաժշտութիւն ալ ունեցած պիտի ըլլան, գոնէ այնչափ որոշ եւ իսկատիա՝ որչափ են այդ երկու չափական արուեստքն, եւ գոնէ բաւական ընտիր ճաշակ մունեցած են յայսմ ալ<sup>29</sup>:

Փաստօրէն Ալիշանն ըստ արժանաւոյն բարձր գնահատելով հանդերձ հայոց ազգային ճարտարապետութիւնը, նոյն այդ չափանիշն է կիրառում նաեւ հայ ազգային Երաժշտութեան հանդէպ: Իդէպ, այստեղ հաւանաբար աւելորդ չի լինի յիշատակել, որ Ալիշանից շատ տարիներ անց Կոմիտաս վարդապետը նոյնակս ստիպուած էր հրապարակել «Հայը ունի ինքնուրոյն Երաժշտութիւն»<sup>30</sup> խորագրով իր յօդուածը, որն առաջին անգամ լոյս է տեսել 1913ին Կ.Պոլսի Ազարամարդ օրաթերթում, եւ որի նպատակն էր ապացոյցներով հակադարձել այն տգէտ ընորդիմախօսներին, ովքեր դեռեւս բացայացորէն կասկածի տակ էին դնում եւ նոյնիսկ փորձում յանհրահի ժխտել հայոց բնիկ՝ ինքնուրոյն Երաժշտութեան գոյութիւնը:

## ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ ԵՒ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Կոմիտասի՝ շնորհալուն առաջին յօդուածը՝ «Շնորհալին. նորա դարը եւ նորա ժամանակ յուզուած կրօնական խնդիրները», 1893 Ապրիլի 25ին Էջմիածնի Գէորգեան ճեմարանում Սողոմոն սարկաւագ Սողոմոննեանի ներկայացրած աւարտական շարադրութիւնն է: Ինչպէս նշուած է Վերնագրից յետոյ առկայ յղումի մէջ, հեղինակն օգոստել է Ալիշանի Շնորհալի եւ պարագայ իր աշխատութիւնից եւ Ներսէս Շնորհալու Թուղթ ընդհանրականից<sup>31</sup>: Այդ ժամանակ Կոմիտասը դեռեւս վարդապետ չէր օծուել ու ստորագրում էր Սողոմոն սարկաւագ Սողոմոննեան: Այս յօդուածում պատանի Սողոմոնի ուշադրութեան ծիրում առաելապէս Շնորհալու ժամանակաշրջանի քաղաքական եւ կրօնական խմորումներն ու յուզումներն են, ինչպէս

<sup>29</sup> Նոյն, էջ 87:

<sup>30</sup> Կոմիտաս Վարդապետ, «Հայը ունի ինքնուրոյն Երաժշտութիւն», Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, Գիրք Բ, (աշխ.՝ Գ. Գասպարեան եւ Մ. Մուշեղեան), Սարգսի Խաչենց-Փրինթինֆո, Երեւան, 2007, էջ 83-88. Նշելի է, որ յաջորդ՝ 89-91 էջերում կայ նաեւ յօդուածի նախնական տարբերակը՝ նոյն Վերնագրով:

<sup>31</sup> Այն առաջին անգամ զգայի կրճատումներով տպագրուել է Էջմիածնի հանդէսի 1950 Մայիս-Յունիկ՝ էջ 23-26, եւ Յովիս-Օգոստոս՝ էջ 42-48 համարներում, իսկ ամբողջութեամբ՝ Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, Գիրք Արև (էջ 15-54, եւ 466-68):

նաեւ կիլիկեան Հայաստանի՝ հարեւան Երկրների հետ ունեցած քաղաքական, կրօնական ու դաւանաբանական սկզբունքային վիճաբանութիւնները, որոնց միջեւ իմաստուն հաշտարարի եւ խաղաղութեամբ կանոնակարգողի հսկայական դեր է ունեցել Ծնորհալին: Ինչ վերաբերում է Կոմիտասի անդրադարձին՝ Ծնորհալու բուն երաժշտագիտական ժառանգութեանը, ապա Սողոմոն Սողոմոննեանի առաջին գիտական յօդուածը հենց հայ հոգեւոր Երգերին է նուիրուած՝ «Հայոց Եկեղեցական Եղանակները» խորագրով, որն առաջին անգամ լոյս է տեսել Արարակը պարբերականի 1894ի մի շարք համարներում<sup>32</sup>: Սա երաժշտագիտութեան ասպարեզում երիտասարդ Կոմիտասի գիտական յօդուածների Երախայրիքն է. այն բաղկացած է միքանի Ենթավերնագրով մասերից, որոնցից Ներսէն Ծնորհալուն անմիջականօրէն առնչութեներն են «Մանրուառմն» եւ «Մանրուամն Եղանակները» կոչուող մասերը, եւ որոնք վկայում են այս բարդ ոլորտի հանդէպ Կոմիտասի լշջմիտ հետաքրքրութիւնը, այսպէս. «Հին երաժիշտները Մանրուառմն ասեղով հասկանում էին՝ ուսումն Եկեղեցական Երգերի, Եղանակների եւ խաղերի մասին»<sup>33</sup>: Ծնորհալու Թուղթ ընդհանրականից մէջբերելով քահանայութեան համար պահանջուող գլխաւոր ունակութիւնները՝ «Ճեկեղեցական գիրս ուղիղ ընթեռնով, եւ զմանը ուսմունս ծայնաւորացն պաշտել յեկեղեցիս», Կոմիտասը համարում էր, որ խազերը մեզ համար մեռած նշաններ են, քանզի մեր նախնիները զլացել են աւանդել սերունդներին դրանց գօրութիւնը. «Մանրուառմն լիակաբար իմացողներ թերեւս թուով շար քիչ են եղել, որոնք եւ թագսդի են պահել իրանց գիտութիւնը ճիշդ այնպէս, ինչպէս յիսուն փարի առաջ Կ. Պօսոյ հայ երաժիշտները՝ նշաճինները, արդի հայ խսկական ծայնագրութիւնը, որ հացի խնդիր էին դարձրել: Եթէ երաժիշտները որոնք իմաստուն կամ փիլիսոփայ էին կոչում այն ժամանակի լեզուով, չթագցնէին, միւս ծայնագրած, բազմաթիւ ձեռագիր կամ արդագրած երգարանների հետ մեր ձեռքը հասած կը լինէր գոնէ մի քանի օրինակ եւս ձեռնարկ հին խաղերի եւ Եղանակների մասին, որոնք Մանր ուսման նիւթն են»<sup>34</sup>:

Խնդրոյ առարկայ յօդուածի յաջորդ՝ «Մանրուամն Եղանակները» բաժնում, անդրադառնալով Ալիշանի «Յաղագս ծայնից թէ ուստի գտաւ»<sup>35</sup> վերտառութեամբ ուշագրաւ նիւթին, որն ըստ էութեան հենց մանրուամն Եղանակների մասին է, Կոմիտասը յայտնում է, որ ինքը մինչ այդ ուսում-

<sup>32</sup> Սողոմոն Ա. Ս. Սողոմոննեան, «Հայոց Եկեղեցական Եղանակները», Արարակ (Արօնական-բարոյական, գրական-պալմական, բանասիրական-մանկավարժական, ազգային եւ պաշտօնական ամսագիր), Վաղարշապատ, 7:1894, էջ 222-27, եւ 8:1894, էջ 256-60. նաեւ՝ Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, Գիրք Ա, էջ 55-75:

<sup>33</sup> Կոմիտաս Վարդապետ, Գիրք Ա, էջ 62:

<sup>34</sup> Նոյն, էջ 63:

<sup>35</sup> Կոմիտաս Վարդապետ, Գիրք Ա, էջ 65-75:

նասիրել է 22 ձեռագիր խազգրքեր եւ գետեղում դրանցում առկայ մանրուաման եղանակների այբբենական ցանկերը՝ համեմատելով դրանք Ալիշանի Միտուանում առկայ ցանկերի հետ, որից յետոյ այդ եղանակների անուանումները դասակարգում ըստ ձայնեղանակների, վերնագրելով դրանք «Ութն ձայնի նրբութիւնները»<sup>36</sup>: Վերջում Կոմիտասը պարզաբանում է. «Այս եղանակների գիյում նշանակուած են Ութն ձայն եղանակները, որոնք առանձին հիմք են կազմում մնացած մանրեղանակների»<sup>37</sup>: Ծնորհալու օրոք զարգացման բարձրագոյն մակարդակի հասած Մանրուամունքների ուսումնասիրութեամբ Կոմիտասն զբաղուել է իր ողջ ստեղծագործական կեանքի ընթացքում, հիմնուելով նաեւ Ալիշանի վերոնշեալ երկի վրայ՝ ճգնելով գտնել դրանցում եւ այլ ծիսական ժողովածուներում առկայ խազանշանների վերծանման բանալին:

### ՆԵՐՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՆ ՓԻԼԻՍՈՓԱՅ ԵՒ ԽԱԶԱԳԷՏ

Ներսէս Ծնորհալին զարգացած միջնադարի այն բազմահմուտ եւ բազմակողմանի երաժիշտն է, ով ո՞չ միայն հանճարեն երգահան էր, այլև իր երգերի անզուգական կատարողն ու մեկնաբանողը, ինչպէս նաեւ մեծ մտածող ու խորաթափանց փիլիսոփայ. հենց նա է, որ իր անվիճելի հեղինակութեամբ հաստատել է հմուտ երաժշտին միջնադարում «փիլիսոփայ» կոչելու վերոնշեալ աւանդոյթը, եւ հենց իրեն էլ միանգամայն պատշաճում է այդ յուժ պատուալոր տիտղոսը: «Այս յեղին Տօրոսեան անապարաց եւ լեռանց մէջ վարժեցաւ մեր Ծնորհալի Երգեցողն ալ՝ ասպուածակուր ծիրքը արուեստի հետ խառնել, եւ իմաստից ու լոռից հետ ծնանիլ եւ եղանակներ, եւ ըլլալ նուազաւոր փիլիսոփայ մը. վասն զի այս գեղեցիկ արուեստիս կամ գիլրութեանս՝ իմաստասիրութեան լծորդ եւ լրումն ըլլալը՝ պղարոնական միօք ճանչցեր էին մեր վարդապետը եւ վանականք, եւ պարզապէս Փիլիսոփայ կ'անուանէին գերգեցող Եկեղեցոյ»<sup>38</sup>: Այսպէս է բնորոշում Ալիշանը Ծնորհալու առաքելութիւնն ու յաւելում.

Իր տուած մեկնութեանը համեմատ Ծնորհալին ալ փիլիսոփայացաւ անթերի. եւ անդադար կ'երգէ Հայոց Եկեղեցոյն մէջ իր բազմապատիկ Տաղերովը, Ծարականներովը, եւ Գանձերովը, թէ սուրբ պատարագի եւ թէ ժամասացութեան ամէն ժամերուն պատշաճեցուցած երգերով. մանաւանդ սրբազնագոյն օրերու՝ Մեծ պահոց եւ Մեծ շաբաթուն. որոց խորին յիշատակները՝ աւելի զգալի եւ ախորժելի ընել կու տայ իր քրիստոսասէր ազգայնոց. եւ իբրեւ իր հոգւոյն մաքուր թելերով կապելով զանոնցն ալ՝ ջանայ քաշելու յերկինս<sup>39</sup>:

Ներսէս Ծնորհալին իր ողջ կեաքի ընթացքում մեծապէս ծաղկեցրեց ու ճոխացրեց հայոց խազագրութեան արուեստը՝ դրա տիրապետումը պար-

<sup>36</sup> Նոյն, էջ 70:

<sup>37</sup> Նոյն:

<sup>38</sup> Նոյն:

<sup>39</sup> Նոյն:

տադիր դարձնելով բոլոր քահանաների համար: Նրա օրօք են գրուել Մանրուսման առաւել նշանակալից եւ բարդագոյն խազգրքերը, որոնց պարունակած ճոխ ու հարուստ խազանշաններն ինքնին վկայում են երաժշտական նշանների այդ համակարգի բարձրագոյն զարգացման եւ կարեւորման մասին՝ կիրիկեան Հայաստանում: Ծնորհային կատարելագործել եւ մեծապէս զարգացրել է հայոց հոգեւոր երգեցողովեան Ութ-Ճայնի համակարգը Ծանր<sup>40</sup> ու Ստեղի<sup>41</sup> տիպի շարականների բազմաթիւ եղանակներով, ինչպէս նաև «զարտուղի»<sup>42</sup> եւ «խոսրովային»<sup>43</sup> կոչուող մեղեդիներով, ապահովելով տաղերի ու մեղեդիների բարդ կառուցուածքը եւ հարստացնելով դրանց եղանակները իր ժամանակի գուսանական նուագուրդների գործիքային երաժշտովեանը յատուկ զարդոլորուն եթեվշներով: Իսկ խազանշանների հիմնական այն խումբը, որ անուանուել է արուես-դրաւոր,

<sup>40</sup> Ծանր.- 1. հայոց եկեղեցու ժամերգութեան մէջ ընդունուած երգերի չորս տեմպերից մէկը (միասները՝ Զափաւոր, Յորդոր, Միջակ): Ծանր էին երգում Տէրունական տօնների Օրինութիւնները, Հարցերը, Ստեղիները, Պատարագի «Խորհուրդ խորին»ը եւ «Լոյս զուարթ»ի երկու տները, Արեագալի շարականների մի մասը են.,. 2. առողանութեան եւ հայ հին երաժշտովեան մէջ գործածուող Վառ եւ Բութ Ճայնի անուններից մէկը (Մկրտչեան, Էջ 116):

<sup>41</sup> «Ստեղի (շարական)».- իբրու բազմաստեղն, բազմաթիւ գեղգեղեալ որպէս մեղեդի» (Նոր բառզիր հայկազեան լեզուի, հյոր. Բ, Էջ 745. նաև՝ «հայկական մոնողիայի ծայնեղանակ՝ հայ հոգեւոր երաժշտովեան ութայնի համակարգից դուրս, որը որպէս «լրացուցիչ» առանձնանում է իր բազմաթիւ լադային հիմքով» (Մկրտչեան՝ Էջ 242-43):

<sup>42</sup> «Զարտուղովթին – modulation» (Թահմիզեան, Ներսէս Ծնորհային, Էջ 243). նաև՝ «շեղում, մողովիացիա (modulazione)» (Մկրտչեան, Էջ 15, 84):

<sup>43</sup> Թահմիզեանն իր Ներսէս Ծնորհային երգահան գրքի 23-24 էջերի յղումներում նշում է, որ «Խոսրովային» աճականը հայ հին մատնագրութեան մէջ գործածուած է լայն՝ ընդհանուր եւ նեղ՝ մասնայատուկ մի ամբողջ շարք նշանակութիւններով: Այն կիրառութեան մէջ է մտել պարսից խոսրով թագաւորի ժամանակից, երբ Մովսէս կաթողիկոսի նախաճեռնութեամբ հաստատուեց հայոց թուականը եւ կոչուեց «խոսրովային», պարսկերէն խսրաν (թագաւոր) բառից, որ հայկական շիշաններուն կարող էր արտասանուել խուարեւանի ծետվ: Ֆիրդուսին տեղեկացնում է, որ Բարբարի եւ Սարգսի մրցոյթի ընթացքում խոսրով Ապրվէգին գերել է մի «արքայական երգ ու նուազ», իսկ առաւել լայն առումով այն վերաբերում է երաժշտանձի ընդհանուր գծերին եւ նշանակում է արեւելեան: Ըստ Մկրտչեանի երաժշտական բառարանի (Էջ 114)՝ այն հայկական հոգեւոր մոնողիայի ծայնեղանակների որոշակի խումբ է, որ հայ եկեղեցում իր տեսական իմաստարուումը ստանալով կոչուեց խոսրովային ոճ, նաև՝ հայկական խազգրութեան նշաններից մէկի անունն է, կընա՞ Խո, որ նոյնն է՝ Քմազարդ: Յաճախ գործածում է Շուրիդի կամ Սուրիդի փոխարէն: Նշանակել է «արքայական լադերի ոճ, ախորժալուր, լաւ եղանակ»: Լիմոնճեանի նոտագրութեան համակարգում հիմնական (միջազույհական) ծայնաշարի հինգերորդ ծայնը: Արդի երաժշտովեան տեսութեան մէջ հաւասարեցում է ց հնչինին:

հեղինակել ու հաստատել է նոյնպէս Շնորհալին, այդ բարդ ար-ուստը հասցնելով աննախարէա բարձր մակարդակի: Ըստ Թահմիզեանի, Շնորհալին «Ձեւի, կառուցուածքի, կշռոյթի, մասամբ լեզուի ու նոյնիսկ աշխարհազացողութեան գեսակէտով մասնագիտացուած երգասրեղ-ծովինը զգայի մօդեցնելով իր բնական ակունքներին՝ ժողովրդական արուեստին, հասդարել է երաժշտական ժամանակի զացողութեան մի նոր որակ՝ աւելի աշխուժ ու կենդանի շարժումով»<sup>44</sup>: Շնորհալին անշուշտ նաեւ մեծ գեղագէտ էր, ում ստեղծագործական սկզբունքներն ու խորի-մաստ ասոյթները հմուտ երաժշտի եւ մասնաւրապէս եկեղեցական երգ-չի վերաբերեալ կարող են գործնական ուղեցոյց հանդիսանալ նոյնիսկ մեր օրերում:

### ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ ՊՈՒԾ

Ներսէս Շնորհալու արտապաշտամունքային ստեղծագործութիւններից է 4000 տողից բաղկացած ծաւալուն «Յիսուս Որդի» պոեմը (կազմուած երեք գրքից), որ համարտում է հայ մատենագրութեան երկրորդ Նարեկը: Սա Հին ու Նոր կտակարանների աւանդական պատումների բանաստեղծական հմուտ վերաբերադրութիւնն է, որ այլ կերպ կոչում է նաեւ «Ողբերգութիւն վիպասանական ի տանից սրբոց»: Ամենայն հաւանականութեամբ այս ծաւալուն քերթուածն անցեալում եղանակաւոր է պատմուել կամ ասերգուել, իսկ որոշ հատուածներ էլ գուցէ երգուել են՝ ինչպէս հայոց Սասունցի Դաւիթ դիցազնավէպի որոշ հատուածներ:

Հետաքրքրական ենք համարում նաեւ սփիտքահայ երաժշտագէտ Աշոտ Պատմագրեանի կարծիքը Շնորհալու երաժշտական ժառանգութեան մասին. «Երաժշտութեան պատմութեան մէջ ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ դարը նկարուում է 16րդ դարը, երբ միքանի գերմանացի եւ իբրաւացի երգահաններ, երաժշտութիւնը եկեղեցու կալանքներից ձերքազարդու համար, ոիմեցին երոպական աշխարհիկ երգի օժանդակութեան: Նոյն մկայլացումն ունենում է նաեւ Ներսէս Շնորհալին 12րդ դարում, որ ժողովրդական ծանօթ երգերի եղանակներին յարմարեցնում է կրօնական խօսքեր եւ դարձնում է եկեղեցական երգ»<sup>45</sup>:

Պատմագրեանը գտնում է, որ Շնորհալին առաջինն էր, ով սկսեց կիրառել գուսանական եւ ժողովրդական երգերի տաղաչափութիւնը հայոց հոգեւոր երգերի մէջ. նա Շնորհալուն իրաւամբ համարում է նաեւ հայերէն աշխարհաբար լեզուի հիմնադիրը<sup>46</sup>: Հեղինակը յատկապէս նշում է Շնորհալու երգերի բանաստեղծական եւ մենեղիական պարզութիւնը, ինչպէս

<sup>44</sup> Թահմիզեան, Երաժշտութիւնը հայկական Կիլիկիայում, էջ 20:

<sup>45</sup> Ա. Պատմագրեան, Հայ երգը դարերի միջից, տպ. Տօնիկեան, Պէյրութ, 1973, էջ 19:

<sup>46</sup> Նոյն, էջ 199:

նաեւ ժողովրդական աշխուժ ու կայտառ կշռոյթ՝ ի տարբերութիւն Եկեղեցական երգեցողութեան մինչ այդ եղած դանդաղ ու միօրինակ ընթացքի: Փաստօրէն՝ Ծնորհալու հեռատես եւ իմաստուն բարենորոգումները միանգամայն փոխել են Հայ Եկեղեցու դիմագիծը: Ըստ Պատմագրեանի, «Ծնորհալու այս մրայլացումը եւ նրա իրագործումը կրկնակի արժէք է սրանում այն գրեսակէտից, որ մինչ Ելրոպայում նման շարժումը սկսուեց Եկեղեցական համեստ խաւերից, Հայասրանում այդ շարժումը սկսում եւ գործադրուում է Հայոց Եկեղեցու վերին պետի կողմից... Ներսէս Ծնորհալին հայոց կաթողիկոս էր, Հայասրանեայց Եկեղեցու վերին իշխանաւորը»<sup>47</sup>: Եեղինակը Ծնորհալու այս բարեփոխումը համեմատում է Ելրոպական երկրների՝ դէայի Վերածնունդ տանող միտումների հետ, «այն գարբերութեամբ միայն, որ մեզ մօք այդ պարմական իրադարձութիւնը պեղի էր ունենում չորս դար աւելի կանուխ»<sup>48</sup>: Եւ այսպէս, Ծնորհալու ստեղծագործինների հումանիստական գեղագիտական սկզբունքներն արագօրէն ստանում են համաքրիստոնէական, եւ նոյնիսկ՝ համամարդկային նշանակութիւն:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներսէս Ծնորհալին Գրիգոր Նարեկացուց յետոյ հայոց երաժշտական ու բանաստեղծական արուեստի ամէնից մեծանուն եւ բազմատաղանդ ներկայացուցիչն է, ում ստեղծագործութիւնները գնահատելու համար հնարաւոր եւ հարկաւոր է կիրառել միջազգային բոլոր բարձրագոյն չափանիշերը: Հազորագիտ կերպով հարուստ նրա երաժշտական լեզուում առկայ են մասնագիտացուած երգաստեղծութեան այն ուրոյն արտայայտչամիջոցները, որոնք ներդաշնակօրէն միաւրուամ են հայ ժողովրդական երաժշտութեան կենսունակ տարրերն ու հոգեւոր երգեցողութեան դարաւոր աւանդույթները, հարստացնելով վերջինս առաւել ազատ գեղազգայական մտածողութեամբ եւ պարգևելով բազում հոյակերտ ստեղծագործութիւններ: Ծնորհալու պարագայում մեծապէս գնահատելի է այն, որ չնայած հոգեւորականի բարձրագոյն դիրքին, նա իր ստեղծագործութիւնները մշտապէս սնում էր ժողովրդագուսանական արուեստի լաւագոյն նմուշներից բխած թարմ ու կենսական շնչով: Հենց դա էլ բնական արձագանգ գտնելով ժողովրդի կողմից, հարազատ ու սիրելի էր դարձնում Ծնորհալու գործերը Ե՛ւ Եկեղեցու ներսում, Ե՛ւ դրանից դուրս՝ արտապաշտամունքային բազմամարդ հանդէսներում:

Հայ գրականութեան եւ ո՛չ մի գործ այնքան չի թարգմանուել ու տպագրուել աշխարհի տարբեր լեզուներով, որքան Ծնորհալու հոգեւորի «Հայատով խոստովանիմ» հոչակաւոր երկը, որի առաջին՝ իտալերէն թարգմա-

<sup>47</sup> Նոյն, Էջ 202:

<sup>48</sup> Նոյն:

Նութինը կայացել է դեռեւ 1690ին, իսկ արդէն 1873ին այն թարգմանուել է 36 լեզուով եւ լրյու տեսել Վենետիկի Ս. Ղազար կղզում, բերելով հեղինակին համամարդկային մեծ հոչակ:

Ներսէս Շնորհալու երաժշտա-բանաստեղծական արուեստը դարակազմիկ նշանակութիւն ունեցաւ ոչ միայն հայ հոգեւոր երգաստեղծութեան համար, այլեւ բարձրացրեց կիլիկեան Հայաստանի երաժշտական մշակոյթը աննախադէպ մակարդակի, որի շնորհիւ էլ յստակօրէն նախանշուեց յետազայում Երոպական Վերածնունդին յատուկ մարդասիրական եւ բնապաշտական շարժման միջազգային հունը:

## THE MUSICAL HERITAGE OF ST. NERSES SHNORHALI (SUMMARY)

ARPI VARDUMYAN  
avardumyan8@gmail.com

The well-known 12<sup>th</sup> century Catholicos of Cilician Armenia, St. Nerses Shnorhali (The Graceful, 1100-1173), was one of the greatest persons of medieval Armenian culture and a talented poet-composer. His versatile artistic heritage belongs not only to the Armenian people, but also to the entire civilized world.

St. Nerses the Graceful was not only an outstanding Armenian composer of his time, but also a great reformer of medieval Armenian musical thinking. He streamlined and renewed the old ceremony of the Armenian Church's rite through his new and splendid creations. In addition, he edited nearly the whole musical heritage of previous composers and became the greatest reformer of Armenian spiritual music.

The poetical and musical heritage of the eminent philosopher, composer and singer St. Nerses Shnorhali is extremely important in the history of Christian musical culture as a whole due to its content and depth. In his best creations St. Nerses Shnorhali predetermined European Renaissance tendencies in the developmental trends of medieval philosophical and aesthetic thought.